Հավելված N 2
2026 թվականի փետրվարի «10»-ին կնքված
N «1032-11002/2026-ՏԱՎՏ3» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություն |
| Դրամաշնորհի N | N 1032-11002/2026- ՏԱՎՏ3 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.02.2026-31.12.2026 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.02.2026-31.03.2026 |
| Ներկայացման օր | 28.04.2026 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Լիլիթ Մուրադյան<br>Ծրագրի համակարգող |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

| |
|---|
| 1.1.Անհատական կարիքների գնահատում եւ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքում<br>1.2.Խնամքի անհատական ծրագրի կազմում, առաջին տնայցերի իրականացում<br>1.3.Խնամքի ծառայությունների տրամադրում (կենցաղային սպասարկում, բժշկական օգնություն և սպասարկում, խորհրդատվական օգնություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն)<br>2.1. Սոցիալական միջոցառումների պլանավորման մեկնարկ<br>2.2.Առաջին սոցիալական միջոցառումների կազմակերպում (էքսկուրսիա, տոնական միջոցառում)<br>3.1.Սոցիալական աշխատողի խորհրդատվություն<br>4.2.Անձնակազմի վերապատրաստում<br>5.1.Համայնքային գործընկերների ներգրավում եւ համագործակցության պայմանների սահմանում |

2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:

| |
|---|
| |

Հաշվետու ժամանակահատվածում Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքում տնային խնամքի ծառայության իրականացումը վերագործարկման և վերակազմավորման փուլում է գտնվել՝ երկարատև դադարից հետո ապահովելով ծրագրի շարունակականության վերականգնում և կայուն գործունեության հիմքերի ձևավորում:

**Ծրագրի վերագործարկում և շահառուների ներգրավում**
Ծրագրի վերագործարկումից հետո Ասոցիացիան ստանձնել է ակտիվ դեր համայնքում ծառայության վերաներկայացման, իրազեկման և պոտենցիալ շահառուների հայտնաբերման ուղղությամբ: Իրականացվել են նպատակային հանդիպումներ և անհատական աշխատանք համայնքի բնակիչների հետ՝ բացատրելով ծառայության բովանդակությունն ու հնարավորությունները:

Ծրագրում ընդգրկվել է 20 շահառու, որոնց հայտնաբերման և ներգրավման գործընթացում ապահովվել է սերտ համագործակցություն ՄՍԾ Վայքի տարածքային կենտրոնի հետ: Ասոցիացիան աջակցել է շահառուների ուղղորդմանը դեպի ՄՍԾ, ինչպես նաև ուղեգրի ստացման գործընթացներին՝ նպաստելով վարչական ընթացակարգերի ավելի սահուն կազմակերպմանը:

**Անհատական գնահատում և ծառայությունների ձևավորում**
Ծրագրի շրջանակում իրականացվել են շահառուների անհատական կարիքների գնահատումներ, մշակվել են խնամքի անհատական ծրագրեր և կազմակերպվել են առաջին տնայցերը: Գնահատման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել շահառուների իրական և առաջնահերթ կարիքների բացահայտմանը՝ ներառելով սոցիալական, առողջական և հոգեբանական բաղադրիչները:

Այս փուլը կարևոր է եղել ծառայությունների նպատակային պլանավորման և յուրաքանչյուր շահառուի համար առավել համապատասխան աջակցության ձևավորման տեսանկյունից:

**Ծառայությունների տրամադրում և աջակցություն**
Վերագործարկումից հետո մեկնարկել է տնային խնամքի ծառայությունների տրամադրումը՝ ներառելով կենցաղային աջակցություն, խորհրդատվական և սոցիալ-հոգեբանական օգնություն: Ծառայությունները տրամադրվում են անհատական մոտեցմամբ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր շահառուի առանձնահատկությունները:

Սոցիալական աշխատողի կողմից իրականացվում է շարունակական խորհրդատվություն՝ ուղղված շահառուների իրավունքների իրազեկվածության բարձրացմանը և սոցիալական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնմանը:

**Համայնքային իրազեկում և ներգրավվածություն**
Հաշվի առնելով, որ ծրագիրը վերագործարկվել է երկարատև դադարից հետո, համայնքում իրականացվում են ակտիվ իրազեկման աշխատանքներ՝ վերականգնելու ծառայության նկատմամբ վստահությունը և ձևավորելու ճիշտ պատկերացում դրա բովանդակության և շրջանակների վերաբերյալ:

Իրազեկման գործընթացը միտված է ինչպես նոր շահառուների հայտնաբերմանը, այնպես էլ արդեն ընդգրկված շահառուների ակտիվ ներգրավվածության խթանմանը՝ իրենց խնամքի գործընթացում: Միաժամանակ կարևորում է շահառուների և նրանց ընտանիքների իրազեկումը իրենց իրավունքների և հասանելի ծառայությունների վերաբերյալ:

**Ընդհանուր առաջընթաց և ազդեցություն**
Չնայած ծրագրի վերագործարկման փուլում գտնվելուն, արդեն իսկ արձանագրվել են կարևոր արդյունքներ՝

- վերականգնվել է տնային խնամքի ծառայության մատուցումը համայնքում,
- ձևավորվել է արդյունավետ համագործակցություն ՄՍԾ Վայքի տարածքային կենտրոնի հետ,
- ապահովվել է շահառուների նպատակային ներգրավում և ծառայությունների մեկնարկ,
- ակտիվացել է համայնքում ծառայության վերաբերյալ իրազեկվածությունը,

- նախանշվել են ծառայության հետագա զարգացման և որակի բարձրացման ուղղությունները:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ծրագրի վերագործարկման կարևոր փուլ, որի արդյունքում ստեղծվել են անհրաժեշտ նախադրյալներ ծառայության շարունակականության, կայունության և համայնքում երկարաժամկետ ազդեցության ապահովման համար:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Առկա չեն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել են մի շարք կարևոր դիտարկումներ և համակարգային բնույթի խնդիրներ, որոնք հիմնականում կապված են ՀՀ ԱՍՀՆ կողմից տրամադրված գնահատման գործիքների, շահառուների հետ աշխատանքի ընթացակարգերի կիրառման և ՄՍԾ Վայքի տարածքային կենտրոնի կողմից տարեցների խնամքի իրական կարիքների գնահատման դժվարությունների հետ:

**Հիմնական խնդիրներ և սահմանափակումներ**
Գործնական կիրառումը ցույց է տվել, որ գործող գնահատման ձևաթղթերը լիարժեք չեն արտացոլում շահառուների բազմաշերտ կարիքները․ դրանք սահմանափակ են ֆունկցիոնալ, ճանաչողական և հոգեբանական բաղադրիչների գնահատման տեսանկյունից, ունեն ոչ հստակ ձևակերպումներ և չեն ապահովում գնահատման արդյունքների և անհատական խնամքի ծրագրերի միջև տրամաբանական կապը:

Միաժամանակ, համայնքային մակարդակում նկատվում է ծառայության վերաբերյալ թերի պատկերացում․ հատկապես տարածված է մոտեցումը, որ ծառայությունը պետք է ուղղված լինի միայն շարժունակության կամ ծանր առողջական խնդիրներ ունեցող անձանց, մինչդեռ խնամքի կարիքները հաճախ ունեն ավելի լայն և բարդ բնույթ:

Առանձին կարևոր խնդիր է արձանագրվել շահառուների ուղղորդման և գնահատման փուլում: Ասոցիացիայի կողմից նախնական գնահատման և համայնքից ստացված տեղեկատվության հիման վրա ՄՍԾ Վայքի տարածքային կենտրոն է ուղղորդվել շուրջ 30 տարեց անձ, որոնք ունեն խնամքի կարիք: Սակայն ՄՍԾ կողմից գնահատման փուլում առաջացել են դժվարություններ այդ կարիքների ամբողջական բացահայտման հարցում: Արձանագրվել է, որ առկա գործիքակազմը և մոտեցումները ոչ միշտ են թույլ տալիս տեսանելի դարձնել խնամքի իրական անհրաժեշտությունը, և որոշ դեպքերում գնահատման ընթացքում առավել մեծ շեշտ է դրվում սոցիալ-տնտեսական գործոնների (օրինակ՝ նյութական ապահովվածություն, զավակների առկայություն) վրա, քան անձի ֆունկցիոնալ և խնամքի կարիքների վրա:

Արդյունքում եղել են դեպքեր, երբ խնամքի կարիք ունեցող անձինք ՄՍԾ կողմից չեն ընդգրկվել ծառայությունում՝ կարիքի ոչ լիարժեք բացահայտման պատճառով: Այս հանգամանքը դիտարկվում է

որպես համակարգային բարելավման անհրաժեշտություն՝ ուղղված ինչպես գնահատման գործիքների, այնպես էլ մասնագիտական կարողությունների զարգացմանը:

**Քաղած դասեր**

- Անհրաժեշտ է ներդնել առավել ամբողջական, ապացույցահեն գնահատման գործիքներ և ապահովել դրանց կիրառման միատեսակ մոտեցումներ:
- Կարևոր է ուժեղացնել գնահատման և խնամքի պլանավորման միջև կապը:
- Պահանջվում է համայնքային սոցիալական աշխատողների գնահատման հմտությունների շարունակական զարգացում:
- Նոր ծառայությունների դեպքում կարևոր է համայնքում ճիշտ իրազեկման ապահովումը և շահառուների ակնկալիքների ձևավորումը:

**Կատարված քայլեր և առաջընթաց**

Արձանագրված խնդիրները ներկայացվել են Տարեցների պաշտպանության ցանցի շրջանակում և փոխանցվել ՀՀ ԱՍՀՆ համապատասխան ստորաբաժանումներին, քննարկվել ՄՍԾ Վայքի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատողների հետ: Ասոցիացիան շարունակում է ակտիվ դեր ունենալ բարելավումների առաջարկման և մասնագիտական լուծումների մշակման գործընթացում, ինչպես նաև իրականացնում է շարունակական իրազեկում համայնքում՝ նպաստելով ծառայության ճիշտ ընկալմանը և շահառուների ավելի ակտիվ ներգրավմանը:

**Ընդհանուր գնահատական**

Չնայած նշված սահմանափակումներին, դրանք չեն խոչընդոտել ծրագրի հիմնական ընթացքը, սակայն հստակ ցույց են տվել համակարգային կատարելագործման անհրաժեշտությունը: Միևնույն ժամանակ, արձանագրված խնդիրները հիմք են ստեղծում ծառայությունների որակի բարձրացման և առավել արդյունավետ, շահառուակենտրոն համակարգի ձևավորման համար:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

1.3.Խնամքի ծառայությունների տրամադրում (կենցաղային սպասարկում, բժշկական օգնություն և սպասարկում, խորհրդատվական օգնություն, սոցիալ-հոգեբանական աջակցություն)
2.1. Սոցիալական միջոցառումների պլանավորում
2.2.Սոցիալական միջոցառումների կազմակերպում (էքսկուրսիա, տոնական միջոցառում

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:

Այդպիսի գործողություններ չեն արձանագրվել:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ — Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Գլխավոր քարտուղար՝ Արտակ Մանգասարյան — Նախագահ՝ Արթուր Թորոսյան

-------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

(ստորագրություն)

Կ.Տ.